ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՇՄՆ-ԾՁԲ-26/10

ք.Երևան «22» «01» 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս.Աթանեսյանի, որը գործում նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Արփրոդաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Միրզոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Ընդհանուր գործունեության մոնիթորինգային ծառայությունների»** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N°3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու թղթային օրինակ (Հավելված N°3) կամ դրանք ներկայացնում է էլեկտրենային ստորագրությամբ և ուղեկցող գրությամբ Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

3.2. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը, իսկ էլեկտրենային ստորագրությամբ ներկայացվելու դեպքում՝ Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին, կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **178 800 (մեկ հարյուր յոթանասունութ հազար ութ հարյուր)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N°2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի Հավելված N°1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև 2026 թվականի հունվարի 9-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10. Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (Հավելված N°4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.11. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12. Պայմանագիրը կազմված է 4 (չորս) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի Հավելվածներ N°N° 1-ը, 1.1-ը, 2-ը, 3-ը և 3.1-ը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Արփրոդաքշն» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, շենք 23, բն. 10
ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
հհ 900011018646	հհ 2050022438191001
ՀԿՀՀ 02507198	ՀԿՀՀ 01271104
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար	«Արփրոդաքշն» ՍՊԸ-ի տնօրեն
Ս.Աթանեսյան	***Հ.Միրզոյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №1
«_12_» «_01_» 2026թ. կնքված
«ՇՄՆ-ԾՁԲ-26/10» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Ս.Աթաբեկյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Արփրոդաքշն» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ.Միրզոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

22 դրամ

Ծառայության							
Իրավիրված նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցքն ծածկագիրը՝ ըստ ԳՄՊԴ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	գինը	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	90711500	ընդհանուր գործունեության մոնիտորինգի ծառայության տեխնիկական բնութագիրը համաձայն Հավելված №1.1-ի	դրամ	178 800	1	ք.Երևան, Կառավարական տուն 3	09.01.2026-31.12.2026 թթ.

Հավելված №1.1
«22» «01» 2026թ. կնքված
«ՇՄՆ-ԾՁԲ-26/10» ծածկագրով պայմանագրի

Ընդհանուր գործունեության մոնիտորինգի ծառայություն

- Կատարողը Պատվիրատուի պահանջով պետք է տրամադրի հայկական լրատվական մեդիա դաշտի մոնիթորինգի և վերլուծության ավտոմատացված առցանց հարթակի ծառայություններ ամսական բաժանորդագրության միջոցով,
- Կատարողը պետք է տրամադրի որոնման տարբեր սկզբունքների համակցմամբ մեդիա տեղեկատվության որոնման համակարգ, ապահովի որոնման համակարգի անվտանգ շահագործումն ու տեղեկատվության անվտանգության ապահովումը,
- Կատարողը Պատվիրատուի պահանջով պետք է ապահովի շրջակա միջավայրի նախարարության գործունեությանն առնչվող հարցերով հայկական լրատվական կայքերի հրապարակումների մոնիթորինգի ծառայությունների ծրագրային ապահովումը,
- Ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի Պատվիրատուին մեդիամոնիթորինգի տվյալների վերլուծության և գնահատման ծառայությունների համար նախատեսված համակարգում համապատասխան օգտահաշիվ տրամադրելու միջոցով, որին ավտոմատացված կարգով կուղղվեն հրապարակումների մոնիթորինգի տվյալները,
- Համակարգը պետք է աշխատի Պատվիրատուի պահանջներին համապատասխան բանալի բառերի հիման վրա: Համակարգը պետք է ճկուն լինի բանալի բառերի ցանկում, Պատվիրատուի պահանջներին համապատասխան, փոփոխությունների իրականացնելու առումով, տրամադրված գործքիների միջոցով վերլուծական գրաֆիկների պատրաստում, ինչպես նաև տեսնել յուրաքանչյուր լրատվամիջոցի կողմից հրապարակված նյութերի քանակը, այդ թվում տոկոսային հարաբերակցությամբ տվյալների վերլուծության գրաֆիկիայի պատկերով,
- Մոնիտորինգի նպատակով համակարգում ներառում է հայկական առցանց ԶԼՄ-ների առնվազն 95 տոկոսը: Համակարգը ճկուն է ԶԼՄ-ների ցանկում, Պատվիրատուի պահանջներին համապատասխան, փոփոխությունների իրականացնելու առումով: Բացել գտնված նյութերը սկզբնաղբյուրում՝ այն լրատվական կայքերում, որտեղ դրանք հրապարակվել են,
- Համակարգում ֆիլտրման գործիքների կիրառման հնարավորություն
- Համակարգը պետք է ունենա սոցիալական կայքերի համար նախատեսված գրառումներ բաժին, որտեղ զետեղված կլինեն հայկական ԶԼՄ-ների կողմից հրապարակված գրառումները ակտիվ հղումներով: Համակարգը պետք է հնարավորություն ընձեռի ուղիղ հղումով անցնելու դեպի համապատասխան լրատվամիջոցում հրապարակված նյութի ֆեյսբուքյան գրառում՝ մեկնաբանություններին ծանոթանալու նպատակով,
- Պատվիրատուն ըստ անհրաժեշտության կարող է փոխել նախապես գրանցված էլեկտրոնային հասցեն:

Փաթեթի գործիքակազմը՝

- 10 բանալի բառ, բառերի փոփոխման հնարավորությամբ,
- 1 օգտատեր,
- Բազմալեզու որոնում՝ կայքի միջոցով,
- Տվյալների վերլուծություն
- Facebook, YouTube, Telegram հանրային հասանելի ալիքների բովանդակության ծանուցում՝ Պատվիրատուի նշած էլփոստի հասցեին ծանուցման և (կամ) կայքի փնտրման միջոցով՝ համաձայն Պատվիրատուի բանալի բառերի,
- Ծանուցում էլփոստով և (կամ) Կատարողի կողմից առաջարկվող այլ եղանակով՝ Պատվիրատուի կողմից նշած բանալի բառերով հրապարակումների վերաբերյալ,
- Հիմնական էջ,
- Facebook հրապարակում,
- Արդյունքները ֆիլտրելու հնարավորություն,
- Մեդիա արխիվի հասանելիություն կայքի միջոցով,
- Youtube,
- Հրապարակումների սենտիմենտ անալիզ (տոնայնության ստուգում)՝ ինքնաշխատ տարբերակով,
- Խորհրդատու:

Հավելված №2
«22» «01» 2026թ. կնքված
«ՇՄՆ-ԾՁԲ-26/10» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Ս.Աթանեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Արփրոդաքշն» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ.Միրզոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների հաճողական կարգով)											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	90711500	Ընդհանուր գործունեության մոնիթորինգային ծառայություններ		14 900	29 800	44 700	59 600	74 500	89 400	104 300	119 200	134 100	149 000	178 800	**178 800**

Հավելված №3
«22» «01» 2026թ. կնքված
«ՇՄՆ-ԾՁԲ-26/10» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարություն
ք.Երևան, Կառավարական տուն 3
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011018646
ՀՎՀՀ 02507198

ԿԱՏԱՐՈՂ
«Արփրոդաքշն» ՍՊԸ
ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, շենք 23, բն. 10
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050022438191001
ՀՎՀՀ 01271104

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2026թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝ ***Պետության կարիքների համար ծառայության մատուցման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «22» «01» 2026թ.
Պայմանագրի համարը՝ ՇՄՆ-ԾՁԲ-26/10
Պատվիրատուն և Կատարողը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2026թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

№	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	բանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված №3.1
«22» «_____01_____» 2026թ. կնքված
«ՇՄՆ-ԾՁԲ-26/10» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Արփրոդաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև «22» «_____01_____» 2026 թվականին կնքված № ՇՄՆ-ԾՁԲ-26/10 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____» 2026 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
_____ ստորագրություն	_____ ստորագրություն